## Մեկնարկեց «Արի տուն-2018» ուսումնաճանաչողական ծրագրի 2-րդ փուլը

Հուլիսի 9-ին Սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Արի տուն» ուսումնաճանաչողական ծրագրի անցումային փուլը, որին մասնակցում են 30 սփյուռքահայ պատանիներ Ռուսաստանի Դաշնությունից, Հունգարիայից, Բելգիայից, Ֆրանսիայից, Մակեդոնիայից:

Սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանը ողջունեց երիտասարդներին ցանկանալով, որ նրանք ավելի լավ ծանոթանան իրենց հայրենիքին, սիրեն այն ու նորից ցանկանան վերադառնալ: «Սա նոր Հայաստանն է, որտեղ երկրի տերը մենք բոլորս ենք: Այսօր փողոցով քայլելիս կտեսնեք ժպտացող մարդկանց, ովքեր ուրախ են, որ հայ են և ապրում են Հայաստանում: Վստահ եմ, որ դուք սիրահարվելու եք Հայաստանին: Թավշյա հեղափոխության շնորհիվ այսօր ամբողջ աշխարհն է խոսում Հայաստանի մասին, վստահ եմ, որ ձեր շնորհիվ նույնպես կլսեն և կճանաչեն Հայաստանը: Սա մեր բոլորի հաղթանակն է: Այս օրերի ընթացքում կբարելավեք լեզվի ձեր իմացությունը, կայցելեք Հայաստանի պատմամշակութային վայրեր, սակայն պիտի խնդրեմ, որ շատ շփվեք հասարակ մարդկանց հետ, ճանաչեք ձեր հայրենիքը ավելի խորքից», – նշեց Մխիթար Հայրապետյանը:

Ծրագրի ընթացքում մասնակիցները կլինեն Հայաստանի պատմամշակութային վայրերում, թանգարաններում, կայցելեն «Թումո» կենտրոն, կլինեն Սուրբ Էջմիածնում, շախմատի մրցախաղ կունենան Սփյուռքի նախարարի հետ, կհանդիպեն մշակույթի գործիչներին:

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բնակչուհի Լիլիթ Առաքելյանը ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող «Արի տուն» ծրագրի շրջանակներում արդեն 10 տարի իր տանն է հյուրընկալում Սփյուռքից ժամանած պատանիներին ու աղջիկներին:

Փարիզից, Աբխազիայից, Մոսկվայից, Հոլանդիայից և այլ քաղաքներից ու երկրներից տիկին Լիլիթի տանն են ապրել 13 աղջիկ ու տղա արժանանալով նրա գրկաբաց ընդունելությանն ու մայրական քնքշանքին: Այս տարի հյուրընկալել է Փարիզից ժամանած Իլոնային և Լորային, որոնց հետ արդեն մտերմացել է, իսկ Վարդավառի տոնը ջերմ մթնոլորտում նշել են Սևանում:

Լիլիթ Առաքելյանն ասաց, որ բոլորն էլ շատ խելացի, կայտառ, դաստիարակված ու հայրենասեր երեխաներ են եղել: Գրեթե բոլորի հետ բարեկամացել են, մինչև հիմա համացանցի կամ հեռախոսի միջոցով շփվում են վերապրելով միասին անցկացրած օրերը: Հատկապես սերտ կապի մեջ են Հոլանդիայից Տաթևիկի և Աբխազիայից Սերգեյի հետ:

Սերգեյը մասնակցելով «Արի տուն» ծրագրին, այնքան է ոգևորվել անցկացրած օրերից, որ որոշել է տեղափոխվել Հայաստան: Կրթություն է ստացել Երանի բժշկական համալսարանում և այժմ աշխատում է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնում:

«Իմ տանը հյուրընկալած երիտասարդներին այնպես եմ վերաբերվել, որ երբեք օտարություն չեն զգացել: Ծրագրով նախատեսված շրջագայություններից տուն վերադառնալով հանգստանալուց հետո միասին հայկական ավանդական ուտեստներն էինք պատրաստում և զրուցում իրենց տպավորությունների մասին: Հանգըստյան օրերն էլ հագեցած էին անցնում. երեկոները զբոսանքի էինք դուրս գալիս և լավ ժամանակ անցկացնում», – ասաց Լենա Կարապետյանը հավելելով, որ աղջիկներին քուֆթա պատրաստել է սովորեցրել:

**http://hayernaysor.am**

ՀԱՅՐԵՆԻՔ – ՍՓՅՈՒՌՔ

# Հարցազրույց պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մեր Հովհաննիսյանի հետ

**Սույն թվականի հունիս 5-16-ը Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտն իրականացրեց իր հերթական նախագիծը, այն է Ռոստովի մարզում կյանքի կոչեց հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար «Հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության դասավանդման հիմնախնդիրներ» վերապատրաստման դասընթացը (72 ժամ): Այն Դոնի Ռոստովի Նոր Նախիջևան հայկական համայնքի հետ համագործակցությամբ անցկացրին Երևանի պետական համալսարանի դասախոսները Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, Հայոց պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մեր Հովհաննիսյանը և Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Հովհաննիսյանը: Այսօր մեր հյուրն է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մեր Հովհաննիսյանը:**

***– Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան, շատ ուրախ ենք և ողջունում ենք Ձեզ Դոնի Ռոստովի Նոր Նախիջևան համայնքում: Ի՞նչ կարևոր առաքելությամբ եք այս անգամ եկել Դոնի հյուրընկալ երկրամաս:***

– Դոնի հայկական համայնքը Սփյուռքի հետ գործակցության ծրագրերում մեր առաջամարտիկներից է եղել և մնում: Համայնքի հետ այս տարիներին իրականացրած տարաբնույթ ծրագրերի թվում այս մեկը տարբերվում է: Այն տեղի հայոց լեզու և գրականություն ու պատմություն դասավանդող ուսուցիչների մասնագիտական, մեթոդական վերապատրաստմանը միտված ծրագիր է, որը իրականացրինք Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի ուսուցիչներից մեկի ահազանգի արդյունքում: Ուրախալին այն է, որ համայնքի ղեկավարությունը, մասնավորապես նախագահ Հարություն Սուրմալյանն ու գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը, հարցը քննարկելով, անմիջապես դրական արձագանք են տվել և ապահովել բոլոր պայմանները ծրագիրը պատշաճ իրականացնելու համար:

***– Պարո՛ն Հովհաննիսյան, չե՞ք ծնվել Ձեր այս նախագիծը, և այն ի՞նչ նպատակ ունի:***

– Ծրագիրը սկսել ենք 2016 թ. Սոչիից, երբ մեր հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ Սփյուռքի հայոց լեզու և գրականություն ու պատմություն դասավանդող ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում, ըստ անհրաժեշտության, մասնակցել հայրենիքում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին: Ներգրավված լինելով նման ծրագրերում՝ փորձեցինք իմ գործընկերների հետ գրտնել ավելի հասանելի եղանակներ: Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի մասով Սփյուռքի հետ 2011-2012 թթ. սկսված համագործակցության ծրագրերը գիտակրթական բնույթ են կրում՝ նպատակ ունենալով ի սպաս դնել մեր հայագիտական ներուժը Սփյուռքի գործընկեր կառույցների համար: «Հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության դասավանդման հիմնախնդիրներ» վերապատրաստման դասընթացը նպատակ ունի օգնելու հայրենիքից հեռու հայապահպանության գործում մեծ ավանդ ներդնող ուսուցիչներին: Նրանցից շատերը այդ գործին լծվել են մեծ եռանդով և չունեն այնպիսի հնարավորություններ, որ իրենց թույլ տան ըստ անհրաժեշտության վերապատրաստվել: Մեր առջև խնդիր ենք դրել հնարավորինս լուծելու այս հարցը: 2-3 մասնագետից բաղկացած մեր խումբը, գործակցաբար համայնքային կառույցի, այս դեպքում Դոնի Ռոստովի հայկական համայնքի հետ, տեղում իրականացնում է խտացրած դասընթացներ, որի արդյունքում դասընթացին հաջողությամբ մասնակցած ուսուցիչները ստանում են համապատասխան հավաստագրեր: Դասընթացի ընթացքում փորձում ենք տալ թե մասնագիտական նորույթ ներկայացնող իմացական-վերլուծական, թե մեթոդական բնույթի գիտելիքներ, ինչպես նաև համացանցում առկա մասնագիտական գրականությունից օգտվելու հմտություններ:

***– Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան, Դուք եղել եք Սփյուռքի շատ համայնքներում, մասավորապես Դոնի երկրամասում, հայապահպանման հիմնախնդիրն ի՞նչ առանձնահատկություններ ունի մյուս համայնքների հետ համեմատած:***

– Նշեմ, որ իրականում այդքան էլ մեծ թվով համայնքներում չեմ եղել: Նախընտրում եմ աշխատանքային գործունեությունն ըստ նպատակի իրականացնել այնտեղ, որտեղ դրա անհրաժեշտությունը առկա է: Փորձում եմ կատարված աշխատանքը ամրապնդել և այդ համայնքներում կայուն գործակցության դաշտ ձևավորել: Սփյուռքի յուրաքանչյուր հայկական համայնք իր առանձնահատկություններն ունի: Յուրաքանչյուրը, իր ձևի մեջ յուրօրինակ լինելով, մեծ տեղ ունի մեր սրտում: Ինչպես նշեցի, Դոնի հայ համայնքը կարևոր տեղ է զբաղեցնում Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Սփյուռքի հետ կապված ծրագրերում: Երբ սկսում էի աշխատանքները, որպես մեկնարկային հարթակներ դասական սփյուռքից ընտրել էի Լիբանանը, իսկ ոչ դասականից Դոնի Ռոստովը, քանի որ երկուսն էլ մեծ պատմություն և ավանդ ունեն: Այս իմաստով Դոնի հայ համայնքը, մասնավորապես համայնքային կառույցն իր կառավարման ձևաչափով և փորձով Սփյուռքի դասական և ոչ դասական համայնքների հետաքրքիր համադրում է: Այստեղ էլ առկա են Սփյուռքին բնորոշ խնդիրները, սակայն համայնքային կառույցը երբեք երկրորդական նշանակություն չի տվել հայեցի կրթության և դաստիարակության հարցերին: Ավելին, այսօր մեծ թիվ չեն կազմում այն համայնքները, որտեղ ոչ միայն գիտահետազոտական դաշտին են ուշադրություն դարձնում և տարածաշրջանի հայության պատմության շուրջ ուսումնասիրություններ պատվիրում, այլ նաև տեղի գիտահետազոտական կառույցների հետ գործակցաբար համայնքի ներկայացուցիչներն իրենք են մասնակից դառնում այդ հետազոտություններին: Հույս ունեմ, որ մեր համագործակցությունը գնալով ավելի է ամրապնդվելու սկիզբ դնելով նոր նախագծերի:

**- Շնորհակալություն:**

**Հարցազրույցը պատրաստեց**
**Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆԸ**